№ 56 Կիրակի 27 սեպտեմբերի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ 1915 Կիրակի 27 սեպտեմբերի № 56

# ՓԱՅԼԱԿ

Քաղաքական, հասարակական ու գրական լրագիր

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԿԻՐԱԿԻ ԵՒ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Տարեկան գինը — 3 րուբլի, 1/2 տարուանը — 1 ր. 50 կ., 1 ամս. — 35 կ.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆ ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին՝ առաջին երեսի վրայ—20 կոպ, վերջին ,, ,, —10 ,,

Հասցէն՝ Шуша, Редакція газеты ,,Пайлакъ''. Ганджунцев. ул. домъ Костандова. Schoucha, rédaction du journal ,,Phaïlak''.



ԼԵՒՈՆ ԵՒ ԱՆՏՈՒԱՆԵՏԱ ԹԱԴԷՈՍԵԱՆՆԵՐԸ յայտնում են իրենց ազգականներին ու ծանօթներին, որ կիրակի սեպտեմբերի 27-ին կատարուելու է հոգեհանգիստ իրենց թանգագին հօր

ԻՍԱՀԱԿ ՄԱՏՎԷՅԻՉ ԹԱԴԷՈՍԵԱՆԻ

յիշատակին, Վերին Թաղի Ս. Յովհաննու (կանաչ ժամ) եկեղեցում։ Հոգեհանգստեան սկիզբը առաւօտեան ժամը 11-ին։

Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրանոցի Հոգաբարձութիւնը այսու յայտնում է ի գիտութիւն յարգելի հասարակութեան, որ քաղաքային այգու մօտ գտնւող դպրոցապատկան շտեմարանը (ամբարը) տրւում է աճուրդով առաջիկայ հոկտեմբերի 10-ից։ Աճուրդը տեղի կունենայ հոգաբարձութեան գրասենեակում հոկտեմբերի 4-ին։

Ցանկացողները պայմանների հետ կարող են ծանօթանալ հոգաբարձութեան գրասենեակում ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը։ 2—1 Հոգաբարձութիւն.

## ՍԵՐՄԱՑՈՒԻ ԿԱՐԻՔԸ

Մէկը միւսին յաջորդող սովածութիւնները, որ տեղացին Թշւառ տաճկահայի գլխին, ժամանակ և հնարաւորութիւն չտւին մեզ հարկաւոր ուշադրութիւն դարձնելու կովկասահայ գիւղացուն այս տարի վիճակւած անմխիթար կացութեան վրայ։ Երկարատև անձրևները, կարկտի և ցրտահարութեան պատճառած վնասները հարիւր հազարների հասան. գիւղական ազգաբնակութիւնը զրկւեց իր ապրուստի միջոցներից և կիսաքաղց օրեր է անցկացնում սպասելով դրսից օգնութիւն ստանալու։ Աւելի ցաւալին այն է, որ գիւղական աշխատաւոր մասսան, հողագործ դասը անկարող է եղել գէթ ցանածն ստանալ, գոնէ սերմացու վերցնել եկող տարւայ համար։ Անշուշտ նա մի կերպ քաշ կը տայ իր կեանքն ու գոյութիւնն այս տարի, հաւանականաբար նա վաճառքի կը հանի, սրտի անհուն ցաւով, իր օգնական եզներին, ունեցած չունեցածը. սակայն ինչ պիտի անի եկող տարի, երբ ոչ հնձելու բան կունենայ, ոչ էլ ծախու անասուն։ Ապագայի վիճակն աւելի սոսկալի է, աւելի անտանելի։

Սովորական տարիներում գիւղացու տնտեսական տագնապալի վիճակը անհրաժեշտօրէն իր վրայ կը բևեռէր մեր ուշադրութիւնը, նրա լացն ու հառաչանքն արձագանք կը գտնէին մեր սրտերում, Սակայն դժբախտաբար այս արիւնոտ տարին այնքան բազմակողմանի ու մէկը միւսին գերազանցող ցաւերի հանդէպ է կանգնեցրել մեզ, որ մենք ակամայ զանցառութեան ենք տւել և անուշադրութեան մատնել մեր աշխատաւոր գիւղացիութեան ծով կարիքները և ծայրայեղ անօգնական վիճակը։ Կովկասահայ ինտելիգենցիան, մեր բարեգործական ու այլ բարենպատակ ընկերութիւններն անհրաժեշտօրէն զբաղւած և կլանւած են գաղթականական խնդրով և կովկասահայ գիւղացուն Թնում է միայնակ ու անօգնական տապակւել իր սեփական ցաւերով, լաց լինել իր դժբախտ վիճակը։

Սակայն որքան էլ հրատապ լինի և բացէի պահանջող գաղթականների օգնութեան խնդիրը, այնուամենայնիւ մենք պարտաւոր ենք մտածել նաև մեր քթի տակ գտնւող Թշւառացածների վիճակի մասին, հոգ տանել նաև նրանց դրութեան թեթևացման մասին։ Եթէ անկարող ենք եղած և լինելիք զոհաբերութիւնների քանակն աւելացնելու այն չափով, որ կարողանանք բաւարարութիւն տալ նաև բնութեան արհաւիրքների ենթարկւած և աներրութիւնից վնասւած մեր գիւղացիութեան, գոնէ պէտք է մինիմալ չափով հասնենք նրան օգնութեան, կարողանանք ժամանակին սերմացու մատակարարել նրան, ապահովել նրա եկող տարւայ ապրուստը։ Սերմացուի մատակարարումը և՛ անհրաժեշտ և՛ անհետաձգելի է. այլապէս կը քայքայւի գիւղացիութեան տնտեսութիւնը և մենք եկող տարի կանգնած կը լինենք շատ աւելի մեծ զոհաբերութիւնների պահանջի առջև։

Այդ տեսակէտից գովելի է Բագւի Կուլտուրական Միութեան ձեռնարկութիւնը. թէև չնչին չափով, համեմատած կարիքի հետ, բայց և այնպէս նպատակադրել է օգնութեան հասնել աներրութիւնից վնասւած և աշխատանքի հնարաւորութիւնից զրկւած գիւղական ընտանիքներին։ Այդ նպատակով 5000 րուբլի տրամադրել է պատերազմի «Եղբայրական օգնութեան» կոմիտէին՝ սերմացու գնելու և բաժանելու կարիքաւոր գիւղացիներին։ Ցանկալի է, որ Կուլտուրական Միութեան ձեռնարկն և օրինակը հետևողներ ունենար, որով զգալի չափով դիւրութիւն տրւած կը լինէր գիւղացիութեան վերականգնել իր տնտեսութիւնը, ազատել եկող տարւայ սովի ճանկերից։ Մեր առաջնակարգ պարտականութիւններից մէկը պէտք է լինի ուրեմն՝ ապահովել գիւղացիութեան եկող տարւայ ապրուստի միջոցը, տալ նրան հարկաւոր քանակութեամբ սերմացու և որքան շուտ, այնքան լաւ։

## ԲՈՒԼՂԱՐԻԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹԱԿԱՐԴՈՒՄ

Գերմանական նենգամիտ դիւանագիտութիւնը յաջողեցրեց Բուլղարիային և խճճել իր ցանցերում, ինչպէս արել էր Տաճկաստանի վերաբերմամբ։ Գերման սպաներն ու ինստրուկտորներն արդէն տեղ են գրաւել բուլղարական զօրքի և շտաբի մէջ և պատրաստւում են բուլղար զօրքերն առաջնորդելու սերբիական, յունական ու ռումինական սահմանները։ Ըստ լրագրական տեղեկութիւնների Բուլղարիան պատրաստ ունի 350 հազարից բաղկացած զօրաբանակ, որից 150 հազարն ուղարկելու է Սերբիայի դէմ, իսկ մնացածը յունական ու ռումինական սահմանները։ Այդ քայլն ինքն ըստ ինքեան պարզում է Բուլղարիայի բռնելիք դիրքը և օդն են ցնդում այդպիսով Ռադոսլավովի հաւաստիացումները զինւած չէզոքութեան մասին։ Բառեակ համաձայնութեանն այժմ մնում է կտրուկ միջոցների դիմել։ Ռուսական կառավարութիւնը մի վերջնագրով արդէն պահանջել է Բուլղարիայից հեռացնել գերման սպաներին և ինստրուկտորներին, թողնել Թշնամական վերաբերմունքը դէպի Ռուսաստանի դաշնակից Սերբիան. պատասխանի համար տրւած է 24 ժամ։ Սակայն դժւար թէ գերմանական դիւանագիտութեան թակարդն ընկնողը հնարաւորութիւն ունենայ ազատւելու նեք գտնել։ Հաւանականօրէն Բուլղարիան բացասական պատասխան կը տայ և այդպիսով կանգնած կը լինի ոչ միայն քառեակ համաձայնութեան, այլ և իր հարևան երբեմնի դաշնակից ու բախտակից պետութիւնների դէմ։ Ապագայի խնդիր է, թէ որքան կօգտւի Բուլղարիան իր թագաւորի և նրա խորհրդատու Ռադոսլավովի խիզախ ձեռնարկից, հարց է նմանապէս, թէ որքան յաջողութիւն կը գտնի Գերմանիան շնորհիւ իր նոր աջակցի և օգնականի. կը կարողանայ նա արդեօք ճեղքել Սերբիան և Բուլղարիայի վրայով օգնութեան հասնել Տաճկաստանին. փաստ է սակայն, որ ֆրանսիական զօրքեր են իջել Սօլուն, Յունաստանի ափունքը, որ Յունաստանը անբարեացակամ տրամադրութեան նշան անգամ չէ ցոյց տալիս դէպ այդ կատարւած ակտը, ուրեմն և պատրաստ է հարկաւոր ժամանակ դուրս գալ ընդդէմ Բուլղարիայի։ Այդ է հաստատում նաև Վենիզելոսի արտասանած ճառը, որով նա բացորոշ կերպով պնդում է, որ Յունաստանը դաշնակցական պարտականութիւն ունի Սերբիայի նկատմամբ, ուրեմն և հարկաւոր դէպքում դուրս կը գայ նրան օգնելու։ Ուրեմն համարձակ կերպով կարելի է ասել, որ Բուլղարիան իր անմիտ քայլով իր դէմ հանեց մի կողմից քառեակ համաձայնութեան, միւս կողմից իր հարևան պետութիւնները։ Ցեռ դառնալու ճանապարհները փակւած են Բուլղարիայի համար, նա դարձաւ հլու կամակատարը Գերմանիայի և սրանից յետոյ կամայ-ակամայ շարժւելու է նրա ցանկութեամբ ու թելադրութեամբ։

Նորայր

## ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

ՀԱՐԻՒՐ ՈՐԲ

Ի հարկէ շուշեցիները չեն կարդում

«Голосъ Кавказа» և «Закавк. Рѣчь» հայատեաց թերթերը։ Այդ լրագիրները, ինչ լուտանք ասես, թափում են հայ փախստականների հասցէին, որոնք մեր սահմանները փախչելով, արիւնարբու քիւրդերից ու աճիկներից իրենց կեանքը փրկելով, իբր թէ պատուհաս և վտանգ են դարձել Կովկասի ամբողջ ազգաբնակութեան համար։

Անշուշտ «Голосъ Кавказа» և «Закавк. Рѣчь» թերթերը գիտեն, որ աշխարհումս կայ մի Շուշի քաղաք։ Բայց չգիտեն, որ շուշեցի հայերը, երբ իմացան, թէ փախստականներ պիտի բնակեցւին ժամանակաւորապէս իրենց մօտ, պատէ պատ ընկան՝ արգելելու փախստականների գալուստը. չգիտեն, որ Շուշու հայերը այդ հալածական ազգակիցներին, քիւրդի ու աճկի ճանկերից ճողոպրած այդ թշուառականներին համարում են ծանր բեռ, չարաղոյն պատիժ իրենց համար։

Рыбакъ рыбака видитъ сдалека!

Սակայն քմէ լեցի։ Շուշեցին այնքան էլ մարդակեր չգտնւեց դէպի հայ փախստականը, ինչպէս վերոյիշեալ թերթերը։

Շուշու հայութիւնը կազմում էր զանազան ծրագիրներ, յղանում հազար ու մի առաջարկներ, թխում բազմաթիւ նախահաշիւներ... Եւ դա մի քանի ամիս շարունակ, մինչև որ բոլոր փախստականները տեղաւորւեցին այս ու այնտեղ, բայց ոչ Շուշում, մինչև որ նրանց մի մասն էլ տեղափոխւեց միւս աշխարհը։

Ահա թէ ում համար է այնքան լաւ ասած. եօթն անգամ ձևիր, չափիր, իսկ մի անգամ կտրիր։

Բայց և այնպէս Շուշին իւր երեսը ցեխով չսւեց։ Նա վերջապէս սիրտ արաւ և որոշեց 100 որբ վերցնել ու պահել։

Վերստին սկսւեց ծրագիրների, առաջարկների, նախահաշիւների սովորական պատմութիւնը. նորից իրենց խելքին զոռ էին տալիս զանազան ընդհանուր ժողովներ, մասնաժողովներ, յանձնաժողովներ, ենթաժողովներ, եղբայրական և քոյրական կոմիտէներ։

Այնքան իրարանցում, այնքան խօսքեր, այնքան եռանդի սպառում, որ միամիտ օտարականը կը կարծէր, թէ Շուշին պատրաստւում է ընդունել ոչ թէ 100 որբ, այլ պատրաստւում է հիմնել 100 որբանոցներ...

Եւ այսպէս մի ամսից աւելի է, ինչ շարունակւում է այդ տրագիկոմեդիան։

Իսկ մինչև այդ, բոլոր որբերը էջմիածնից արդէն ցրւել են զանազան հայաբնակ քաղաքներ ու տեղաւորել գթառատ ձեռքերով բացւած որբանոցներում. մի մասն էլ յաւիտեան հանգիստ գտել։

Շուշուն ինչ մնաց։

Աբի և սրանից յետոյ մի սաիր շուշեցու խելացիութեան մասին, թէ գիտէ եօթն անգամ ձևել, մի անգամ կտրել։

Եւ շուշեցիները հասան իրենց նպատակին. աւելի շուտ, քան կարծում էին։ Նրանք մի անգամից երկու նպատակ սպանեցին։

Մի կողմից անչափ բաւական են և ուրախ, որ իրենց այլևս բաժին չմնաց այդ փախստականներից և մանաւանդ որբերից, որոնք միայն գլխացաւանք էին։

Իսկ միւս կողմից՝ մեծատողորդ անուն հանեցին ամբողջ հայութեան մէջ, թէ կատարում են իրենց քաղաքական պարտականութիւնը. թէ փախստականների փոխարէն ծրագրում են այժմ պահելու նրանց որբերին։ Եւ այնքան մեծատողորդ, որ նոյն իսկ «Հորիզոն» թերթը գրում է.

«Թող Շուշու հայ հասարակութեան օրինակը վարակէ և միւս հայ գաւառների հասարակութիւններին»։

Երանի այն հայ գաւառներին, որոնց օրինակը պիտի Շուշին լինի և վայ այն հասարակութիւններին, որոնք պիտի Շուշի քաղաքին նախանձէին...

Բայց և այնպէս շուշեցին դարաբաղցու յատուկ յամառութեամբ կը պնդի. թէ հիմնւում է մի որբանոց, ուր պատսպարւելու են 100 տաճկահայ որբեր։

Ցիրաւի հիմնւում է. գուցէ և հիմնւած է արդէն.

Մի թղթի վրայ. մի փոքրիկ կտոր պատառոտւած թղթի վրայ։ Եւ այդ էլ, ինչպէս երևում է, կորել է. որը մի ամբողջ ամիս է որոնում են զանազան մասնաժողովները իրենց «եռանդոտ» նախագահների հետ միասին։

Իսկ այն 100 որբերը, որ պիտի գային մեզ մօտ։

Օ՜, նրանք, եթէ ողջ են մնացել, կը մեծանան, գուցէ կամուսնանան, զաւակներ կունենան և տակաւին կը սպասեն.

Մինչև որ շուշեցիները մտածեն, չափեն, ձևեն...

Նիմանդ

## ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ ՀԱՐՑԸ

«Փայլակ»-ի № 36-ում ուսուցիչ պ. Եսայեանը ընդհանուր կերպով շեշտել է այն մեծ կարիքը, որ զգացւում է մեր ծխ. դպրոցներում հայրենագիտութեան դասագրքի համար։

Եւ իսկապէս ով եղել է հայրենագիտութեան դասատու, անշուշտ իր կաշւի վրայ զգացած կը լինի այդ առարկայի յարուցած անչափ խոչընդոտներն ու տարւայ վերջը տւած ողորմելի արդիւնքը։

Մինչև այժմ չկայ ոչ մի յատուկ դասագիրք, որ իր մէջ ամփոփէր Ղարաբաղին ու Զանգեզուրին վերաբերող աշխարհագրական բաժինը։ Հայրենագիտութեան միակ համեմատաբար յաջող դասագիրքը Թիֆլիսի մի խումբ ուսուցիչների «Դասագիրք հայրենագիտութեան» է. սակայն այդ դասագիրքը չի կարող բաւարարել վերոյիշեալ գաւառների ծխ. դպրոցների հայրենագիտութեան պահանջներին, որովհետև այնտեղ ծննդավայր է վերցրած Թիֆլիսը։ Այնպէս որ Ղարաբաղի ու Զանգեզուրի ծխ. դպրոցներում պաշտօնավարող ուսուցչի համար այդ դասագրքի «ծննդավայր» բաժինը կարող է ծառայել միայն որպէս նիւթի դասաւորութեան ձևի ու մշակման ծրագիր։

Յաճախ անփորձ կամ նոր պաշտօնատեղի գնացող ուսուցիչները ստիպւած են լինում դեռ մի քանի ամիս իրանք ուսումնասիրելու բնագաւառը, ապա լրիւ կամ կցկտուր տեղեկութիւններ հաւաքելով, լցնում են աշակերտի գլուխը և համարում, որ անցել են հայրենագիտութիւն։ Ուրիշ կերպ էլ լինել չի կարող, քանի որ բնագաւառին անծանօթ ուսուցիչը, որ յաճախ ծանրաբեռնւած է լինում դպրոցական ծանր զբաղմունքներով, հնարաւորութիւնից զուրկ է մօտիկից և աւելի մանրամասն ուսումնասիրելու բնագաւառը։

Հայրենագիտութեան այդ ձևով դասաւանդումը մեր ծխ. դպրոցների պակասաւոր կողմերից մէկն է, որ իւրաքանչիւր բարեխիղճ ուսուցիչ իր բարոյական պարտքը պիտի համարէ օր առաջ լրացնելու այդ պակասը։ Եւ մեզ թւում է, որ պ. Եսայեանի առաջարկը շատ բնական ու տեղին է «... և մենք սխալւած չենք լինի, եթէ հայրենագիտութեան մի յաջող դասագրքի կամ ձեռնարկի կազմելը յանձնարարենք մեր ուսուցիչներին»։ Անպայման սխալւած չենք լինի, քանի որ մեր ուսուցիչները լաւ են ուսումնասիրած այդ գաւառները։ Իւրաքանչիւր ուսուցիչ պաշտօնավարելով այս կամ այն գիւղում, անշուշտ իր յուշատետրում մտցրած կը լինի որոշ դիտողութիւններ իր շրջանի մասին։ Բացի այդ՝ կան ուսուցիչներ, որոնք պաշտօնավարել են շատ գիւղերում, հետևաբար և կունենան շատ տեղերի ուսումնասիրութիւններ։

Ահա այդ դիտողութիւններն են, որ պիտի ի մի ժողովել և կազմել հայրենագիտութեան դասագրքի «ծննդավայր» բաժինը։ Ներկայ դէպքում ծննդավայր կը վերցրւին Շուշին ու Գորիսը։ Մի դասագիրք, որով կարելի կը լինի առաջնորդել թէ Ղարաբաղի և թէ Զանգեզուրի ծխ. դպրոց.։ Վերջացնելով մեր ասելիքը, բարոյական պարտք ենք դնում մեր ընկեր ուսուցիչների վրայ ձայնակցելու պ. Եսայեանի առաջարկին և իրենց ժողոված տեղեկութիւններով օժանդակ հանդիսանալու այդ դասագրքի շուտ կազմելուն։

Ա. Առստամեան

## ՔԱՂԱՔԻՍ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, ամսոյս 13-ին կայացաւ քաղաքիս հայ համայնքի ժողովը, լսելու գաղթականների համար Գանձակ և Թիֆլիս ուղարկւած լիազօրների զեկուցումը։ Լիազօրներից պ. Լ. Վարդապետեանը ժողովականներին զեկուցեց հետևեալը։ Գանձակում ներկայանալով պ. Նահանգապետին, լիազօրները նկարագրել են քաղաքիս և գաւառի տընտեսական սուղ վիճակը և հացի պակասութիւնը. Նահանգապետը յայտնել է, որ ամենայն հաւանականութեամբ Շուշու գաւառը գաղթական չի ուղարկւի և, եթէ ուղարկւելու լինի, միայն՝ ծայրայեղ դէպքում. այն է՝ երբ նահանգի երեք գաւառները (Ղազախի, Գանձակի և Ջիւանշիրի) լցւած լինեն գաղթականներով։ Բացի այդ, նահանգապետը խոստացաւ աջակցել, որ դրսից եկող մթերքները հեշտութեամբ մուծւի քաղաքս։

Անցնելով Թիֆլիս, լիազօրները ներկայացել են Մեսրոպ եպիսկոպոսին, քաղաքների միութեան լիազօր պրոֆեսսոր Կիշկինին, Ս. Յարութիւնեանին և կոմսուհի Վարոնցովա-Դաշկովայի հովանաւորութեան տակ գտնւող կոմիտէի փոխ-նախագահ Պաւլօվին և բոլորին խնդրել են միջամտել ուր հարկն է, որ կամ գաղթական չուղարկւի մեզ մօտ, կամ եթէ ուղարկւելու լինի, քիչ ուղարկեն, որովհետև ոչ մի հնարաւորութիւն չկայ 15,000 գաղթական պահելու և, որ վերջիններիս գալու դէպքում նպաստ տրւի մեր քաղաքին և գաւառին։

Մեսրոպ եպիսկոպոսը, Պաւլօվը և Ս. Յարութիւնեանը յայտնեցին, որ գաղթականներից ամեն մէկը ստանալու է օրական 15-ական կոպէկ, որը հոգալու են կոմիտէներ և, որ տեղացիները գլխաւորապէս պէտք է հոգան բնակարանի և այլ մանր յարմարութիւնների կարիքը։ Պրօֆ. Կիշկինը խոստացել է իւր վրայ վերցնի գաղթականների սանիտարական պէտքերի հոգսը թէ ճանապարհին և թէ մեզ մօտ, որքան տեղս մնալու լինեն նոքա։

Պ. Վարդապետեանը յայտնեց, որ ինքը անկախ իւր լիազօրութիւնից Թիֆլիսից անցել է էջմիածին, գաղթականների դրութեան հետ մօտ ծանօթանալու։ Եւ վերջիններիս վիճակը նկարագրեց այնպէս, որ ներկայ եղողներից շատերը զգացւեցին։

Ժողովը մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշեց առաջարկել ում հարկն է, որ 100 որբ ուղարկւի քաղաքս, որոնց ծախքը, մօտ 800 ր. ամսական, պէտք է հոգան քաղաքացիները, ամսական որոշ տուրք վճարելով։

## ԼՐԱՏՈՒ

### ՇՈՒՇԻ

— Աննպաստ տեխնիկական պայմանների շնորհիւ «Փայլակը» այսուհետև առժամանակ լոյս է տեսնելու շաբաթական մի անգամ՝ կիրակի օրերը։

— Սեպտեմբերի 23-ին Թիֆլիս է ժամանել Կովկասի Նոր Փոխարքայ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկօլայ Նիկօլայեվիչը։

— Երեկ, ամսոյս 27-ին, Վեհափառ Կաթողիկոսի անւանակոչութեան առթիւ հանդիսաւոր մաղթանք կատարւեց Ղազանչեցոց եկեղեցում, որտեղ ներկայ էին տեղիս հայոց դպրոցների աշակերտներն իրենց ուսուցիչների հետ միասին։ Նոյն օրը թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը յղեց շնորհաւորական հեռագիր Կաթողիկոսին։

— Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ Զաւէն վարդապետը ներկայումս գտնւում է էջմիածնում և շուտով ճանապարհւելու է դէպի Շուշի։

—Բագւի Կուլտուրական Միութիւնը 5000 ր. է ուղարկել Ղարաբաղի եղբայրական օգնութեան կոմիտէին՝ սերմացու գնելու կարիքաւոր գիւղացիների համար։ Կոմիտէն հեռագրով դիմել է Ֆոմա-Ջիկօլինկօ յայտնի ֆիրմային՝ տեղեկանալու ցորենի տեսակների և գների մասին։ Ֆիրմայից հեռագրով պատասխան է ստացւել, որ ցորենի առևտուրով չեն զբաղւում։ Կոմիտէն նպատակայարմար համարեց այդ գործին տեղեակ մարդ ուղարկել հիւսիսային Կովկաս՝ ցորեն գնելու համար։

— Տաճկահայ որբերին Շուշում տեղաւորելու և խնամելու համար Շուշու ծխականների ընդհանուր ժողովը ընտրել էր մի յանձնախումբ, որ պէտք է ամսական տուրքեր նշանակէր քաղաքի հայ ազգաբնակութեան վրայ։ Յանձնախումբն ութ նիստ է ունեցել և կազմել է տուրքերի բաշխման ցուցակը։ Այդ ցուցակի համաձայն Շուշու հայ ազգաբնակութիւնը ամսական 921 րուբլի տուրք է տալու որբերի պահպանման համար։

— Կիրակի, ամսոյս 20-ին տեղիս հասարակական ակումբում տեղի ունեցաւ անդամների ընդհանուր ժողովը. քննութեան առնւեց քաղ. վարչութեան առաջարկը, օգնել քաղաքին Բուլվարնայա փողոցը անցկացնելու կանալիզացիա և մայթելու ամբողջ փողոցը։ Ժողովը վճռեց այդ նպատակով ակումբի միջոցներից յատկացնել 1829 ր. 20 կ., համաձայն տեխնիկ պ. Լ. Մինասբէգեանի կազմած նախահաշւի։

— Ամբողջ երկու շաբաթ քաղաքս ընկղմւած էր խաւարի մէջ, շնորհիւ նաւթի բացակայութեան. այժմ նաւթէև կայ, սակայն ֆունտը ծախւում է 10—12 կոպէկով...

— Ամսոյս 24-ին, երեկոյեան ժամը մօտ 9-ին քաղաքից դուրս Եարժա կոչւած տեղում, երեք թուրք աւազակներ յարձակւելով հայ արաբաչիների վրայ, կողոպտել են վերջիններիս։

— Մեզ գանգատւում են, որ չնայած Ղուկասեան դպրոցի վերաբացման համար արւած խոստումներին, այնուամենայնիւ դպրանոցը, ահա հոկտեմբերի վերջն է, դեռ չի՞ բացւել։ Հետաքրքիր է. թէ ինչ է մտածում հոգևոր բարձր իշխանութիւնը։

## ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

*Քարահունջ* (Զանգ. գաւ.). Գիւղացիք անհամբեր սպասում էին, որ անձրև գայ և սկսեն ցելցաքը—աշնանացանը։ Քանի օր է անձրևներ են տեղում և գիւղացիք աշխատասիրական յուսաշող ժպիտները դէմքներին սկսել են իրենց վար ու ցանքսը։ Գ. Ղ.

*Թալլար* 17-ին սեպտեմբերի։ Այսօր լուր ստացւեց թէ աւազակապետ Ռուշիդը «Կրա» կոչւած անտառամասում խլել է՝ Աւագբէկ Նալարէկեանի ձին, Յովսէփ Աթայեանի և Շամիր Բալայեանի ջորիները։ Այսպիսի դէպքեր շատ են պատահել. հարկաւոր է կառավարութեան ձեռք առած միջոցներ։

*Ղալթարի հանք.*—Հունձը վերջացել է, ինչպէս և կալսելը։ Բերքն այս տարի ստացւեց միջակից էլ ցած, զգացւելու է նաև դարմանի պակասութիւնը։ Շրջանումս այժմւանից սկսած են հացահատիկներ առնելու եսեից ընկել, բայց ծրտեղից. ոչ շրջանում կայ և ոչ էլ մօտիկ վայրերում։ Այս տարի հըստացւեց նաև ոչ մի մրգեղէն։

## ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

### ԳՈՐԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԱԿԻՆ

Գորիս, 21 սեպտեմբերի

Ամսոյս 24-ին Գորիսում տեղի կունենայ քաղաքագլխի ընտրութիւն. այժմեան քաղաքագլուխ պ. Տէր-Գրիգորեանի քառամեայ գործունէութեան ժամանակամիջոցը արդէն լրացած է։ Կը վերնտրւէ՞ արդեօք պ. Տ.-Գ.-ը, թէ չի ընտրւի, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան. այդ ուղղութեամբ այստեղ եռանդով աշխատում են, թէ նրա սակաւաթիւ կողմնակիցները և թէ մանաւանդ բազմաթիւ հակառակորդները։

Պարոն Տ.-Գ.-ը մինչև քաղաքագլխի պաշտօնին կոչւիլը ծառայելիս է եղել Բագւում, նաւթային մի ֆիրմայում հաշւապահի պաշտօնով, ստացել է բաւականին սոլիդ ռոճիկ և մենք հաւատացած ենք, որ իր հայրենի Զանգեզուրին ծառայելու սէրն է նրան ստիպել թողնելու իր ապահով պաշտօնը Գորիսի պէս մի վայրում 800 րուբլի վարձատրութեամբ քաղաքագլուխ լինելու համար։ Սկզբում, երբ պ. Տէր-Գրիգորեանը նոր էր անցել գործի գլուխը, բաւական յարգւած էր, գործում էր եռանդով, բայց յետոյ, կարծես, սև կատու անցաւ նրա և գործակցինների միջև. յարաբերութիւնները հետզհետէ լարւեցին, առաջ եկան նաև ամենքին յայտնի մի քանի անախորժ ինցիդենտներ և վերջին ժամանակներըս քաղաքային ինքնավարութեան գործունէութիւնը սառուցման կէտին հասաւ։

Պ. Տ.-Գ.-եանը, որքան կարողացանք իմանալ, իր անգործունէութիւնը բացատրում է նրանով, որ ձայնաւորները չկարողացան ըմբռնել իրեն, կապեցին իր թևերը և թոյլ չտւին անելու այն, ինչ ինքը ծրագրել էր քաղաքի համար։ Ստո՞յգ է արդեօք այս բացատրութիւնը, որ տալիս է պ. քաղաքագլուխը, տարաբախտաբար մենք հնարաւորութիւն չունենք ճշտելու, որովհետև մեր գաւառական քաղաքների ինքնավարական կեանքը շարունակ անցնում է կուլիսների յետևում, հեռու մամուլի և հասարակական լայն շրջանների քննութեան առարկայ լինելուց և վերջին հաշւում մենք համոզւած ենք, այս պարագայից անպայման փնասւում են իրենք, այդ հիմնարկութիւնների գլուխ կանգնած այն պարոնները, որոնք հասարակական գործը թագցրել են հասարակութիւնից։

Գորիսի քաղաքագլխի գործունէութիւնը, Գորիսի ձայնաւորների ոմանց ասելով, անցել է միանգամայն ապարդիւն. Նա իր պաշտօնավարութեան ամբողջ ընթացքում գրեթէ ոչինչ չէ արել և եթէ ձեռնարկել է որոշ գործ, այն էլ այնպիսի անտաքտութիւններով, որ ձայնաւորները մեծ ջանք են գործել անախորժութիւնների լիքվիդացիայի համար։ Ձայնաւորները նրա մօտ յարգի չեն եղել. Նա ստիպել է մի որոշ թայֆայ և դէմագոգային միջոցների առաջ կանգ չառնելով բազմիցս հակասել իրեն. հաշւետւութիւնը քաղաքային գործերում միշտ կաղել է, իսկ քաղաքը հետզհետէ յետադիմել, այժմեան օրին հասել։

*Փաստերը.* 1) Մինչև պ. Տ.-Գ-եանի քաղաքագլուխ լինելը, Գորիսը ունեցել է էլեքտրական լուսաւորութիւն։ Քաղաքի փողոցները և ինքնավարութեան հիմնարկութիւնները լուսաւորւել են տարեկան 720 ռուբլով։ Նոր քաղաքագլուխ պ. Տ.-Գ-եանը այդ գումարը իջեցնում է մինչև 320 ր., քաղաքային սեփական կայարանի իդէան է արծարծում և մինչև օրս այդքանով բաւականանում. հետևանքը այն է լինում, որ քաղաքային էլեքտր. լուսաւորութեան կօնտրագենտ պ. Պետրոսեանը հրաժարւում է, իսկ քաղաքի փողոցները մրափում են խաւարի մէջ։ 2) Քաղաքը հեղեղներից ազատ պահելու համար 3—4 տարի առաջ ինքնավարութիւնը յատկացրել է 700 րուբլի նոր առուներ փորելու, սակայն մինչև օրս այդ ուղղութեամբ ոչինչ չէ արւած. 3) Քաղաքը չունի ջրմուղ հրդեհաշէջ մեքենայ, չնայած որ հրդեհներ լինում են, իսկ գումարայատկացումը այդ նպատակով եղել է 3—4 տարի առաջ։ 5) Քաղաքային աղբիւրների տարեկան նորոգութեան համար միշտ յատկացւում է 100 ր., մի նոր աղբիւր ևս աւելացնելու համար դումաւն ժամանակին բաց է թողել որոշ գումար։ Այսօր հին աղբիւրների անկանոն գործունէութիւնը փաստ է, իսկ նորը դեռ ևս չկայ։ 5) Գնահատողական յանձնաժողովը, որի նախագահը պ. Տէր-Գրիգորեանն է, իր անարդարացի գնահատութիւններով անհագին աղմուկների դուռ է բաց արել քաղաքում երկար ժամանակով։ 6) Քաղաքային դրօսավայրում շինւած ռուսաց եկեղեցու վարչութեան և քաղաքային ինքնավարութեան միջև տեղի ունեցած կօնֆլիկտի և խղուր ծախսերի պատճառը պ. քաղաքագլխի անտաքտութիւնն է։ 7) Քաղաքագլուխ պ. Տ.-Գ-եանը առանց ձայնաւորների գիտութեան դիմում է պ. նահանգապետին և խնդրում թոյլտւութիւն՝ նւիրելու յօգուտ լեհերի 2000 րուբլի և յօգուտ հայ կամաւորների 1000 ր. քաղաքային գումարներից։ Պ. նահանգապետը թոյլատրում է, իսկ ձայնաւորները ստիպւած են լինում պ. Տէր-Գրիգորեանի առաջ դնել ինքնավարութեան ծակ գրպանը։ 8) Քաղաքային դպրոցի հին շինութեան փայտեղէնը վաճառւում է աճուրդով, իսկ քարեղէնը քաղաքագլուխը ծախում է սաժէնը 3 րուբլով, մինչդեռ 10 րուբլով խնդրողները մերժում են ստանում։ 9) Մրգավաճառներից քաղաքագլուխը ինքնակամ ստանում է 3-ական և 6-ական րուբլիներ, հաշիւը մնում է ձայնաւորներին անյայտ։ 10) Առանց ձայնաւոր-իրաւասուների որոշման, աննպատակ կերպով ծախսւում է 1500 ր. քաղաքի փողոցների կանոնաւորման համար. իսկ կանոնաւորումը ըստ պ. քաղաքագլխի հասկացողութեան կայանում է նրա մէջ, որ փողոցի մի կողմից հողը քանդի և թափէ միւս կողմը։ Վերստուգիչ յանձնաժողովը բողոքում է, բայց արդէն եղածը-եղած է։ 11) Քաղաքագլուխը ինքնավարութեան համար յարմար բնակարան գտնելու և վարձելու յանձնաժողովի բողոքին ոչ մի ուշադրութիւն չդարձնելով մի քանի ամսւայ ընթացքում հինգ բնակարան է փոխում, իսկ 1915 թ. նախահաշիւը առանց իրաւասուների քննութեան առարկայ դարձնելու ուղարկւում է նահանգապետին։ Երբ իրաւասուները բողոքում են, նա պատասխանում է. «Ես հաւատացած եմ եղել, որ դուք յետոյ էլ կարող էք հաստատել»։ 12) Վերստուգիչ յանձնաժողովը պ. նահանգապետի միջոցով միայն կարողանում է հաշիւ պահանջել քաղաքագլխից, սակայն այդ հաշիւն էլ մինչև օրս չէ դրւել քննութեան, շնորհիւ պ. քաղաքագլխի.

Քաղաքագլխի ընտրութեան նախօրեակին գործակցինները այսպիսի մեղադրանքներ են հանդէս բերում պ. Տէր-Գրիգորեանի դէմ. ինչ պիտի ասէ պ. քաղաքագլուխը, չգիտենք. յամենայն դէպս, ինչ ասելու է, ցանկալի է, որ ասէր հրապարակով, որովհետև անպայման անհրաժեշտ է լսել և հակառակ կողմից։

*Մ. Ե.*

## ԳԻՒՂԱԿԱՆ ՑԵՑԵՐ

Քարահունջ, (Զանգ. գաւ.) 14 սեպտ.

«Ուժեղի մօտ միշտ էլ
«Տկարն է մեղաւոր...»
*Կռիլով.*

Արտաքին յուզումներն և այլև այլ դառն ու սրտաշարժ երևոյթները, որոնք կատարւում ու երևան են գալիս մարդկային կեանքում պարբերաբար և յուզում են համայն աշխարհը, բայց երբէք, հիւլէչափ անգամ՝ չեն կարողանում ազդել, զգացնել ու շարժել քարեգութ, քարէսիրտ մարդկանց։ Եւ սրանք Ցուգայական ցեղի արծաթասէր շառաւիղներն են, որոնք դեռ գոյութիւն ունեն XX դարու հրաշք կուլտուրայի պահուն։

Քարահունջցիները գիւղում պատահած մանր-մունր վէճերը, դատերը և զանազան խռովութիւններ յարթելու, դատելու և վճիռներ կայացնելու համար, իրենց միջից ընտրել են 3 հոգի «լաւ, արդարադատ» վաքիլներ, որ սրանք յարթեն վերոյիշեալ վէճերը։ Բայց այսօր՝ այդ «լաւ, արդարադատ» մարդիկ չեն կանգնած իրենց իսկական կոչման բարձրութեան վրայ, այլ վարւում են այնպէս, ինչպէս իրենց շահերն են թելադրում. ուժեղի-հարստի սևը սպիտակացնում, խեղճի-աղքատի սպիտակը սևացնում։ «Է՜հ, հարստից օգուտ կայ, աղքատից ինչ օգուտ», ահա սրանց գործի և կեանքի նշանաբանը։

Ընդհանուր սովորութիւն է դառել գիւղական գործերի բոլոր վարիչների համար միայն մի ձգտում. «Ամեն ինչի մէջ շահ, ամեն ինչ գրպանի համար»։

Գիւղումս, մօտ օրերը մի դէպք է պատահում. մէկի գառը մտնում է հարևանի այգին. հարևանը, այրի կին, հրամայում է իր փեսին, որ սա գնա և դաշոյնով մորթի գառանը։ Հրամանը կատարւում է։ Գործը հասնում է պ. պ. «արդարադատ» վաքիլներին. այ «ղօչաղ» վաքիլներ, դուք կը մեղադրէք գառնատէրին և կսկսէք անուշ անել գառը...

Եւ այսպէս անվերջ և անթիւ անգամ կրկնւող դէպքեր ու օրինակներ։ Տեսնում էք, ընթերցող, թէ ինչ ամօթալի և տխրալի ախտեր ու արատներ են կատարւում գաւառական խուլ անկիւններում, և ինչպիսի՜ բախտախնդիրների ու տգրուկ-ցեցերի ճիրաններում են տառապում, արինաքամ լինում անկեղծ ու արդար գործիչների կարօտ թշւառ գիւղացիները։

Գ. Ղ.

## ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱՒԵՐԻՑ

Քարահունջ (Զանգ. գ.) 18 սեպտ.

Քարահունջ գիւղը թէև Զանգեզ. գաւառի փոքրիկ գիւղերից մէկն է համարւում, բայց իր հոյակապ-նորակառոյց դպրոցով, երիտասարդ ինտելիգենտ ուժերով, որոնք ցրւած են Կովկասի այլ և այլ քաղաքներ և որոնցից շատ քչերն են մտածում իրենց ծննդավայրի մասին, իր՝ քաղաքացուն յատուկ նիստ ու կացով և բաւականին մաքուր ու փափուկ ապրուստի տեսակէտից՝ կանգնած է նախանձելի բարձրութեան վրայ։

Դպրոցը երկդասեան է, միշտ ունենում է լաւ ուսուցչական կազմ, երեք հոգուց, լաւ յարմարութիւններով, աշակերտների գերազանց թւով։

Այս 15/16 ուսումնական տարումն ես դպրոցը գտնւում է նոյն վիճակում, բայց ցաւալին այն է, որ գիւղացիներից շատ-շատերը չեն ուզում, այս տարի իրենց երեխաներին դպրոց ուղարկել, շնորհիւ թոշակի, չնայած, որ հոգաբարձութիւնը այս տարի թոշակը մէկ ռ.-ով իջեցրել է, 5-ը 4 ռ. դարձնելով։ Այս տարի հացը պակաս է, ապրուստը բաւական թանգացած, ուստի և ստիպւած են 4 ռ. համար երեխաներին զրկել ուսումից։

Առ հասարակ գիւղական դպրոցների ամենացաւալի, աշակերտների մէջ եղած-չեղած միտքն ու եռանդը մեռցնող ախտը՝ թոշակն է—դրամ պահանջելը։ Երբ ուսուցիչը կամ հոգաբարձուն աշակերտին ասում են, թէ թոշակը բերել ես, կամ թէ՝ վաղը առանց թոշակի չգաս և այլն և այլն, այն ժամանակ ջախջախւում են նրա մտքի նրբին թելերը։ Սա գլխացաւանք է և խեղճ ուսուցչի համար, որ ամեն օր սրան-նրան ասելով, տուն ուղարկելով, դասերից շատ ժամանակ է խլում և որը վնասում է ընդհանուր գործին։

Ցանկալի կը լինէր, որ գիւղական դպրոցներն ունենային կամ ստեղծէին որոշ աղբիւրներ, եկամտային տուրքեր և աշակերտութեանը ազատէին թոշակից։

Քարահունջի դպրոցը բանկում ունի իբր անձեռնմխելի գումար, 30—35 հազար ռուբլի, հանգուցեալ Առաքել Ծատուրեանի կտակածը, որ բերում է է տարեկան մօտ 1200 ռ. շահ, գիւղն էլ ունի որոշ եկամտի աղբիւրներ։ Ահա մի զգալի գումար, որով կարելի կը լինի պահել ոչ թէ 3 ուսուցիչ, այլ 4։

Սակայն ինչպէս լսում ենք հաստատ աղբիւրից, Առ. Ծատուրեանի եղբօր ժառանգները յիշւած կտակից ստացած շահը լրիւ չեն ուղարկում. չգիտենք ինչ պատճառով։

Ցանկալի էր, որ հանգուցեալ Առ. Ծատուրեանի եղբօր ժառանգները այս տարի լրիւ ուղարկէին կտակւած գումարի տոկոսները և իրենք էլ իրենց սեփական միջոցներից օգնութեան հասնէին չքաւոր աշակերտութեանը։ Այսպիսով նրանք շատ մեծ բարեգործութիւն արած կը լինեն իրենց ծննդավայրին, նրա այս տարի սովի ճանկերում գալարւող թշւառներին։

Յուսանք և սպասենք...

*Գ. Ճաղարեան*

## ԳԻՒՂԻ ԽՈՇՈՐ ԿԱՐԻՔՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Բալլուջա, 17 սեպտեմբերի

Առհասարակ բոլոր գիւղերում, որովհետև չկան փոստ-հեռագրական հիմ-

նարկութիւններ, գիւղացիներն իրենց ստանալիք նամակներն ու թղթակցութիւնները հասցէագրել են տալիս իրենց գիւղերի մօտիկ քաղաքում կամ աւանում ծանօթ խոջաների կամ խանութպանի հասցէով, որոնք ստանալով այդպիսի նամակները կամ թղթակցութիւնները, թէ ուշացնում են մի քանի օր և թէ մի շարք անախորժութիւններ են պատահում այդպիսիք ստանալիս։

Օրինակ մի որևէ խանութպան կամ խոջա, որ ստացել է մի գիւղացու անունով եկած փողի՝ повѣстка-ն և փոստից փողը ստացել ու գրպանումն է, առաջարկում է գիւղացուն փողի փոխարէն իր խանութից ապրանք վերցնել, և վայ նրան, ով կասի՝ ինձ փողն է հարկաւոր, պէտք պ. կանգնի և լսի միայն խանութպանի իր գլխին թափած նախատինքներն ու լուտանքները։

Եւ գիւղացին վիզը ծռած աղաչում, պաղատում է և ի վերջոյ փոխանակ իրեն հասնելիք փողի՝ թեփ տակն առած մի քանի փունտ շաքար, մի երկու փունտ սապոն կամ մի այլ բան (այն էլ ծով գինէ ինչ գներով), հայդէ գնում է։ Բացի այդ էն գլխից փողի գումարից արդէն 1 րուբլուն 1 կոպէկ հաշւելով, խանութպանը վերցրել է, իբրև իրեն նեղութեան վարձ։ Մինչդեռ այդ փողերը գիւղացին պիտի ստանար և իր ամենացաւոտ վէրքին սպեղանի դնէր։

Այդ բոլոր անախորժութիւններն ի նկատի առած, մեր կարծիքով, գիւղում ամենաանհրաժեշտ բաների շարքին է պատկանում նաև փոստային փոքրիկ ճիւղեր ունենալը, բայց որովհետև այդ գլուխ բերելը ուշ կը լինի, ուստի ներկայումս այդպիսի անախորժութիւններից զերծ մնալու համար, ամենից յարմար է բոլոր նամակներն ու թղթակցութիւնները հասցէագրել տանուտէրների канцелярія-ների անունով, ուր համարեա ամեն օր իւրաքանչիւր գիւղից разсыльной լինում է։ Ստացւած նամակներն ու թղթակցութիւնները նոքա իրենց հետ կը տանեն գիւղ և ամեն մէկը կըստանայ իր նամակը կամ повѣстка-ն։ Կը մնայ փոստից փող ստանալը, повѣстка-ն տանուտիրոջ հաստատել կը տայ փողատէրն և ինքն իր ձեռքով կը ստանայ փոստից իրեն ստանալիք դրամը։

Այդպիսի մի բան, որքան գիտենք, գոյութիւն ունի Դաշբուլաղի տանուտէրի հասարակութեան մէջ։ Ապա եթէ այդտեղ կարելի է կատարել, ուրեմն և կարելի է նոյնը կատարել նաև ամեն տեղ, մանաւանդ Խանքենդու հասարակութեան գիւղերի համար, որի գիւղերը թւով քիչ են և շատ մօտ։

Ոչ մի դժւարութիւն այդտեղ չկայ. միայն հարկաւոր է հասցէն փոխանակ որևէ մասնաւոր անհատի կամ խանութպանի անունով գրել տալու, հասցէագրել տալ ուղղակի տանուտէրի канцелярія-ի անունով։

Այնուհետև ամեն ինչ իր կարգը կընկնի։ V.

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Կէյր Գարդի

Անգլիական «Անկախ բանւորական կուսակցութիւնը» զրկւեց իր կազմակերպողից. մեռաւ Կէյր Գարդին։ Շոտլանդիայի հասարակ բանւոր էր նա, մանկութիւնից դատապարտւած չարքաշ կեանքի և ծխահանքերի դժոխային աշխատանքներին։ Սակայն իր բնածին խելքով, եռանդուն ջանքերով ինքնուս կերպով ձեռք բերած կրթութեան և ազնիւ բնաւորութեան շնորհիւ կարողացաւ մեծ ազդեցութիւն ձեռք բերել ընկերների շրջանում։

1881 թ., երբ Անգլիայում առաջ եկաւ դեմոկրատական դաշնակցութիւն, որը շուտով փոխւեց սոցիալ դեմոկրատական դաշնակցութեան, Կէյր Գարդին առաջին մասնակցողների մէջ էր։ Այնուհետև 1893 թ. մենք տեսնում ենք Կէյր Գարդուն որպէս ինիցիատոր, կազմակերպող. նրա ջանքերով այդ թւին կազմակերպւում է Անկախ բանւորական կուսակցութիւնը, որ ընդգրկում էր անգլիական զանազան բանւորական կազմակերպութիւնների ներկայացուցիչներին, և Կէյր Գարդին դարձաւ այդ կուսակցութեան լիդերը, նրան շունչ ու հոգի տւողը մինչև իր մահը։ Անկախ բանւորական կուսակցութիւնը, շնորհիւ Կէյր Գարդու եռանդուն աշխատանքի և կազմակերպող ոգու, գնալով զարգացաւ. մի քանի տարի յետոյ միացաւ մի քանի ուրիշ բանւորական կազմակերպութիւնների հետ և այնպիսի ուժ ձեռք բերեց, որ կարող եղաւ ազատ կերպով պայքարի մտնել բուրժուական կուսակցութիւնների հետ, սեփական թեկնածուներ անցկացնել բանւորներից պարլամենտական ընտրութիւնների ժամանակ։ Բանւորական կուսակցութիւնը պարլամենտի բանւորական կուսակցութեան անդամների՝ թիւը հասցրեց մինչև 40, որոնցից մէկն էր և Կէյր Գարդին, որն ամբողջ ժամանակ մնաց պարլամենտական բանւորական ֆրակցիայի նախագահ։ Անգլիական պարլամենտի բանւորական ֆրակցիան, չնայած իր աննշան թւին, մեծ ազդեցութիւն ունեցաւ ընդհանրապէս օրէնսդրական գործունէութեան մէջ և մասնաւորապէս լայն սոցիալական օրէնսդրութեան իրականացման պատճառ հանդիսացաւ։ Տասնեութ տարի Կէյր Գարդին հնչեցրեց իր ձայնը համայնքների պալատում և մեծապէս ազդեցութիւն ունեցաւ երկրի քաղաքական կեանքի ընթացքի վրայ։

Կէյր Գարդին կեանքի վերջին օրերում եռանդուն մասնակցութիւն ունէր քաղաքական կեանքում. նա, իբրև պացիֆիստ, պատերազմի սկսելու օրից հակառակ էր Անգլիայի միջամտութեան. նա ցանկանում էր, որ Անգլիան հեռու մնայ համաշխարհային պատերազմից, սակայն այս անգամ նրա ձայնը զօրեղ արձագանք չգտաւ բանւորների մէջ և նա շատ քիչ համամիտներ ու համախոհներ ունեցաւ։ Անգլիան դուրս եկաւ պատերազմի դաշտ և Կէյր Գարդին չտեսած պատերազմի վախճանը, իր հայեացքի իրաւացի կամ սխալ լինելը, վախճանւեց։

### Հերվէն գերմանական սոցիալ-դեմոկրատների մասին

Յայտնի ֆրանսիական սոցիալիստ Հերվէի կարծիքով պատերազմը խորտակեց գեղեցիկ իդէալն ինտերնացիօնալիզմի, որը պէտք է խաղաղութիւն հաստատէր ընդ միշտ Եւրոպայում։ Սակայն ֆրանսիական սոցիալիստներն ոչնչով մեղաւոր չեն. կայզերի սոցիալիստներն էին (խօսքը գերմ. սոց.-դեմ. մասին է), որ խօսք անգամ չգտան պախարակելու՝ Բելգիայի չեզոքութիւնը խախտելու դէպքում և նրանց հետ ֆրանսիական սոցիալիստները ոչ մի ընդհանուր բան չունեն։ Ամենավատագոյնը ֆրանսիական ռէակցիօներներից աւելի մօտ է ֆրանսիացի սոցիալիստին, քան գերման սոց.-դեմ.։ Գերմանական սոցիալիստները խելագարներ են և քաղաքական տեսակէտից 200 տարի յետ են մնացել ֆրանսիացիներից։ Ի՞նչ արեցին գերմ. սոց.-դեմ. պատերազմի առաջն առնելու համար. ոչինչ։ Սակայն քանի որ անբախտութիւնը վրայ է հասել, ֆրանսիական սոցիալիստներին ուրիշ բան չի մնում, եթէ ոչ գոնէ մարդկութեան համար առաջինի հետևանքներ ձեռք բերել։ Եթէ «Աստծոյ կամքի» մասին խօսելու հարկ է զգացւում, ապա անկասկած է, որ Աստծոյ կամքն այն է, որ ազատագրւեն բոլոր ճնշւած ժողովուրդները— էլզասցիները, լոտարինգիացիները, դանիացիները, լեհերը, ռումինները, սերբերը, բոսնիացիները, իտալացիները, բուլգարները, յոյները, հրէաները, հայերը, արաբները։ Նոյն Աստծոյ կամքը պահանջում է, որ Հաբսբուրգների և Հօհենցոլլերների գինաստիան ոչնչանայ և Ռուսաստանում թագաւորի պարլամենտական ռեժիմ։ Այս նպատակներին հասնելու համար ֆրանսիական սոցիալիստները պատրաստ են լինելու Աստծու և իրաւունքի զինւորներ։

## ՊԱՏԵՐԱԶՄ

### ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետր. հեռ. գործ.)

ԳԵՐԱԳՈՅՆ ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՐԱՆՇԱԿԻՑ

Արեւմտեան ճակատ

Սեպտ. 23-ին—Եակոբշտադի շրջանում սովորական հրացանաձգութիւնը մի քիչ ուժեղացել է Եակոբշտադտից հարաւ արեւմուտք։ Դվինսկի շրջանի ճակատում կռիւը շարունակւում է։ Պօստաւի հարաւային շրջանում թշնամին դուրս քշւեց Զագաչի խրամատներից։ Նարօչ և Վիշնեվսկի լճերի միջև ընկած ճակատում թշնամին նորից յետ մղւեց։ Գերմանացիներին հետապնդելու ժամանակ՝ Վիշնեվսկի լճի հարաւ արեւմտեան շրջանում մեր զօրքերը գրաւեցին Աբրամովշչինան։ Գրաւեցինք նաև Կօրօվիլմին գաղութը և Մինկի գիւղը՝ Սմօրգօնից հիւսիս։ Ստոխօգի գետաբերանի մօտ թշնամին աշխատում էր նորից գրաւել Պօժօգ գիւղը, սակայն յարձակումը յետ մղւեց։ Չարտօրիյսկից հարաւ արեւմուտք թշնամին յետ շպրտւեց դէպի Նովոսելկի գիւղը, որի ժամանակ գերեցինք 150 զինւոր և մի գնդացիր։ Կրասնօվօլֆ և Կօշիշչէ գիւղերի մօտ, Կօլկից արեւելք, մի քանի ընդհարումներ տեղի ունեցան թշնամու դէպի արեւելք շարժւող մասերի հետ։

Կովկասեան ճակատ

Սև ծովի ծովափնեայ շրջանում, Խօպից հարաւ արեւմուտք, առաջապահ մասերի ընդհարումներ են։ Թորթում լճից հարաւ արեւելք, Կեղիկ և Արդօստ գիւղերի մէջ ընկած ճակատում, Խորասանից հիւսիս արեւմուտք, սեպտ. 21-ին, մութն ընկնելուն պէս թիւրքերը հեռացան. նրանց առաջ շարժւելու ջանքերն ապարդիւն անցան շնորհիւ մեր կրակի։ Խորասանից հարաւ Կուրֆա գիւղի մօտ մի քանի ընդհարումներ տեղի ունեցան թիւրքերի առաջապահ մասերի հետ։

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 22-ին սեպտեմբերի

Ամսոյս 13-ին մեռնում է Ղազանչեցւոց եկեղեցու ծխական Կոստանդին Թադէոսեանը, որն իր աշխատանքով հազիւ էր կարողանում պահպանել 9 հոգուց բաղկացած իւր ընտանիքը և որն ահա մի ամբողջ տարի է հիւանդ պառկած էր։ Տէր Յակոբ Այվազեանն իբրև ծխատէր, իմանալով այդ մասին՝ դիմում է հանգուցեալի բարեկամներին, որ երեսքաշ գնեն 5 արշին մահուդ, լայնութիւնը 2 և կէս արշին, որպէսզի կարելի լինի դրանից իւր համար վերարկու կարել, այդ մահուդն էլ գտնւում է այս ինչ խանութում։ Հանգուցեալի ազգականները յարմար չհամարելով սև գոյնով երեսքաշը, բարւոք են համարում գնել 3 արշին թաւիշ՝ մուգ կարմիր գոյնի։ Այս վարմունքն արդէն բաւական էր, որ հանգուցեալի ազգականները Տէր Յակոբի գայրոյթը գրգռեն. թաղման կարգը վերջացնելուց յետոյ քահանան նախ բարկացած յետ է դարձնում երեսքաշը, թէ իբր իրեն համար ցոյց տւած վերարկուացուի կտորը չեն գնել, այդ թաւիշի կտորն էլ իրան պէտք չէ. միւս կողմից առաջարկում է, որ Ղազանչեցւոց եկեղեցւոյ բոլոր քահանաներին, իբրև թաղման գին տան երեքական րուբլի. հանգուցեալի ազգականները յայտնում են, թէ երեսքաշ միայն իրանք կարող են ընտրել ըստ իրանց ճաշակի և կարողութեան և ոչ թէ քահանայի կամ մի ուրիշի ցուցմունքով. միւս կողմից քահանաներին իրանք կարող են վարձատրել, իսկ այն քահանան, որը թաղմանը չի մասնակցել և եկեղեցին էլ չէ եկել՝ նա վարձատրութիւն ստանալու իրաւունք և կարիք էլ չունի. իրան Տէր Յակոբին էլ տալիս են 8 ր., որից մի րուբլի իբրև հոգեբաժին։ Երկու օր յետոյ Տէր Յակոբը մտնում է հանգուցեալի ազգական պ. Սամսոն Պարոնեանի խանութը, յայտնում է իւր խորին դժգոհութիւնը, որ իրան այդքան իբր թէ քիչ վարձ են տալիս և պահանջում է հոգեբաժին 5 ր., թողնում է փողը ու հեռանում. քիչ անց նա փոխում է իւր միտքը և մարդ է ուղարկում 8 ր. յետ ստանալու։

Այժմ հասարակութեան առաջն ենք դնում Տէր Յ. քահ. Այվազեանի վերին աստիճանի տգեղ վարմունքը. ինչպէս կարող է թոյլ տալ մի քահանայ սակարգութեան նիւթ դարձնել հանգուցեալի թաղման կարգը. ըստ հայոց եկեղեցւոյ ոգու և սովորութեան քահանան իւր աշխատանքի համար ստանում է կամաւոր որոշւած վարձ, իսկ այդ կողմից հայ ժողովուրդը երբէք ժլատ չէ եղել և առաջի պարտքն է եղել նախ քահանային գոհացնել, ինչպէս և այս դէպքում։ Տէր Յ. քահ. Այվազեանը բացի 7 րուբլուց՝ նոյն հանգուցեալի թաղման առթիւ ստացել է եկեղեցու մէջ իբրև խաչահամբոյր մօտ 7ր., նոյնքան էլ գերեզմանատանը, ուրեմն մօտ 20—21 ր. վարձատրութիւն է ստացել, բացի երեսքաշից, որ չէ բարեհաճել վերցնել. ուրեմն էլ ինչ դժգոհութեան առիթ կարող է լինել, որ նա այս ու այնտեղ շարունակում է գանգատւել։

Ա. Շ.

Խմբ.-հր. Լ. Վարդապետեան

Печатать дозволено военной цензурой

Տպարան Մ. Բարաջանեանի Շուշում.